

Մարթ է այսոցիկ անուղղակի պատճառ գրել զԼեւոն, իբրու այն՝ զի ՚ի մեր-
ժելն զնա յաթոռոյ եւ ՚ի նեղել, պակասեցոյց զհասոյթս աթոռոյն. եւ թերեւս
կասկածելով իսկ սորա, եթէ որ երբեմն զկաթողիկոսն ՚ի Հռոմկլայն ըմբո-
նեաց, նոյն եւ այժմ ինքն ՚ի նմին յայլոց ըմբռնիցի, կամեցաւ Յովհաննէս
քաջ քաջ ամբացուցանել զբերդն. եւ յայն սակս եւ վասն սեղանոյն՝
զայնքան անգին սպասս քակեաց եւ ելոյծ զՊահլաւունեացն յիշատակս:
Իսկ առիթ հակառակութեան եւ զժտելոյ երկոցուն գոռոզ գլխոցն՝ եղեւ
նման իմն Լամբրունեանցն դիպաց. եւ է ծանուցեալն այս ինչ:

Գ. Կամարտիասեանք.

Յիշեցաւ ՚ի բազում նուագս ՚ի պատմութեանս՝ եւ ցուցաւ մի յաւագ
եւ ՚ի յաջողագոյն պարոնայց եւ լիճ ճորտից Լեւոնի՝ *Կումարտիասն*
Կոստանց, եւ երկիցս կարեւոր դեսպանութեամբք առաքեալ առ աւագա-
գոյն պետականս, առ Փրետրիկ կայսր յԻսաւրիա, եւ առ նուիրակս Քահա-
նայապետին եւ առ իշխանագուն Խաչակիրս՝ ՚ի Պտղոմայիս. էին նորա եւ
եղբարք երկու կրտսերք՝ *Ճօւլին* եւ *Պաղտին*, ամենեքին որդիք Հեռեայ
սեբաստոսի, որոյ պատիւ յայտ առնէ ՚ի դրանէ կայսեր ընկալեալ յառաջ
քան զմտանելն կամ անկանել ընդ տէրութեամբ Հայոց, եւ ազգաւ իսկ յոյն
կամ լատին գոլ. դասեալ ընդ աւագագոյն պարոնայս դրան Լեւոնի, եւ տէր
Կումարտիասայ եւ Նորբերդի, ՚ի գետահովտին Սելեւկիոյ. յորում թուի թէ
եւ սա ինքն Կոստանց անդրանիկն՝ տիրէր մեծի քաղաքին Սելեւկիոյ եւ
Պունատայ բերդի: Ի վերայ մեծութեանցն եւ ճոխութեանց՝ ունէին սոքա եւ
առաւելութիւն գերագոյն, զազգակցութիւն ընդ թագաւորին եւ ընդ կաթո-
ղիկոսին. զի Լեւոն ինքնին ՚ի թղթին առ Իննովկենտ, ազգական իւր կոչէ
զԿոստանց. իսկ Յովհաննոս՝ փեսայ իսկ էր Հեռի, եւ որդիքն՝ քեռորդիք
նորա: Եւ իբրեւ այսպէս պատուեալք եւ ՚ի մեծամեծ գործս վարեալք լինէին
՚ի Լեւոնէ, ոչ գիտեմ որպիսի՝ ինչ անգիտացեալ սոցա, կամ զանգիտեալ
Լեւոնի, յեղակարծումն զչորեսին միանգամայն՝ զհայրն եւ զորդիս ետ
ըմբռնել եւ արգելով կապանօք ՚ի բանտ, յամի 1207. եւ թուի առ ծանր ինչ
յանցուածոյ կամ կասկածի. զի բովանդակ ամս եթող զնոսա յարգելանին,
եւ ոչ իսկ լուաւ աղաչանաց մերձաւորի նոցին եւ իւր մտերմի Յովհաննոս,
որոյ լոկ եւ կաթողիկոսութիւնն՝ թո՛ղ թէ ազգակցութիւն՝ ծանրակշիռ էր
յայս դէպս: Ըստ այնմ եւ սաստկապէս սրտառեալ Մեծաբարոյն այն՝ խո-
ժոռեցաւ, ՚ի բաց դարձոյց զհայրապետական դէմսն ՚ի թագաւորէն, որպէս